

Քվիսիենն ընդդեմ Լեհաստանի (Kwicien v. Poland), 2007, Application No: 51744/99 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան)

Թեմա՝ խոսքի ազատության իրավունքի սահմանափակում

Սանկցիա՝ փոխհատուցման վճարում

Որոշում՝ խոսքի ազատության իրավունքի խախտում

Ընդդատություն՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Լեհաստան

Վճիռն ուժի մեջ է մտել 2007թ. հունվարի 9-ին

Փաստական հանգամանքներ

Դիմումատուն Լեհաստանի քաղաքացի է և 1998թ.-ի տեղական ընտրություններից առաջ շրջանառել է բաց նամակ, որում նա մեղադրանքներ էր ներկայացնում ընտրություններում իր թեկնածությունն առաջադրած պարոն Ս. Լ.-ի հասցեին առ այն, որ վերջինս իրականացրել է անօրինական գործունեություն: Նամակում կոչ էր արվում Ս. Լ.-ին բացարկ հայտնել, հանել թեկնածությունը և չմասնակցել ընտրություններին: Պարոն Ս. Լ.-ը հայց ներկայացրեց դիմումատուի դեմ հիմնվելով «Տեղական ընտրությունների մասին» օրենքի վրա՝ պնդելով, որ բաց նամակում ներկայացված հայտարարությունը չի համապատասխանել իրականությանը և նպատակ է ունեցել արատավորել նրա հեղինակությունն ընտրությունների նախաշեմին: Ներպետական դատարանները եզրակացրել էին, որ Ս. Լ.-ի մասին հայտարարությունները չեն համապատասխանել իրականությանը: Վերաքննիչ դատարանն էլ հավելել էր, որ դիմումատուն խախտել էր պարոն Ս. Լ.-ի անձնական կյանքի իրավունքը և փորձել էր խափանել վերջինիս ընտրությունը:

ՄԻԵԴ-ի վերլուծությունն ու եզրակացությունը.

ՄԻԵԴ-ը եզրակացրեց, որ դիմումատուի բաց նամակի նպատակն էր գրավել ընտողների ուշադրությունը տեղական կառավարման մարմնի ընտրություններում ընտրվել ցանկացող պարոն Ս. Լ.-ի թեկնածության վրա: Այդ առումով, բաց նամակի հայտարարությունը հանրային շահ ներկայացնող հարց էր հանդիսանում տվյալ համայնքի համար:

ԴԻԵԴ-ը վերահաստատեց այն սկզբունքը, որ հանրային շահ հանդիսացող գործերում խոսքի ազատության սահմանափակումները պետք է նեղ մեկնաբանվեն:

Դատարանը գտավ, որ ներպետական ատյաններին չի հաջողվել հաստատել, որ գործը ենթադրել է մի կողմից խոսքի ազատության իրավունքի, մյուս կողմից էլ հեղինակության և այլոց իրավունքների պաշտպանության խնդիրներ: Ներպետական դատարանները նկատի չեն ունեցել նաև այն հանգամանքը, որ պարոն Ս. Լ.-ի, որպես

տեղական կառավարման մարմնի ղեկավարի, թույլատրելի քննադատության շեմն ավելի լայն է մասնավոր անձանց համեմատությամբ:

Ավելին, ներպետական դատարանները դիմումատուի հայտարարությունը որակել են որպես անհիմն փաստեր: ԴԻԵԴ-ը գտել է, սակայն, որ բաց նամակում ներկայացվել են հայտարարություններ, որոնք ողջամտորեն կարող էին որակվել որպես «գնահատողական դատողություններ», ինչպես օրինակ հետևյալ արտահայտությունը «պարտականություններն իրականացրել է ոչ ողջամիտ կերպով»: Նամակում դիմումատուն բերել է նաև կոնկրետ օրինակներ տեղական շրջանային մարմնի որոշումներից, որոնք հետագայում հաջողությամբ բողոքարկվել էին: Այդ պատճառով, ՄԻԵԴ-ը եզրակացրեց, որ դիմումատուի հայտարարությունները զուրկ չեն եղել փաստական հիմնավորումներից: Ավելին, ՄԻԵԴ-ը եզրակացրեց, որ դիմումատուն գործել է բարեխղճորեն և վերջինիս հայտարարությունները չեն եղել անձնական բնույթի մեղադրանքներ ներկայացնելը: Նա քննարկել է հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Ինչ վերաբերում է ներպետական դատարանների կողմից կիրառված սանկցիաների ծանրությանը, ՄԻԵԴ-ը նշել է, որ ներպետական երկու դատարաններն էլ կիրառել են առավելագույն սանկցիաներ, որը նախատեսում էր «Տեղական ընտրությունների մասին» օրենքը և դրանց հանրագումարը կազմում էր միջին ամսական աշխատավարձի տասնվեցապատիկը: ՄԻԵԴ-ը նշեց, որ ներպետական դատարանները չեն տրամադրել որևէ հիմնավորումներ նման ծանր սանկցիաներ կիրառելու համար և չեն պահպանել համաչափության սկզբունքը: ՄԻԵԴ-ը եզրակացրեց, որ սանկցիաները եղել են չափազանց խիստ:

ՄԻԵԴ-ը եզրակացրեց, որ միջամտությունը «անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում» և միաձայն եզրակացրեց, որ խախտվել է դիմումատուի խոսքի ազատության իրավունքը: